ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՄԱԾՁԲ-20-7-5

ք. Երևան «17». «11». 2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Պատվիրատու», մի կողմից և «Ռեդի Սթեդի» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Գ. Մարգարյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Կատարող», մյուս կողմից, երկուսը միասին՝ կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 12,717,217.80 (տասներկու միլիոն յոթ հարյուր տասնյոթ հազար երկու հարյուր տասնյոթ ամբողջ ութսուն) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն Պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագիրն ուժի մեջ մտնելը /ս.թ. հուլիսից/ կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչությունը, իսկ Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ Թիկունքի վարչությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Ռեդի-Սթեդի» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ք. Երևան, Բուռնազյան 7
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 1570020500760100
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 00851011
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ	Տնօրեն
Մ. ՅՈԼՉՅԱՆ	Գ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված 1
N ՄԱԾՁԲ-20-7-5 ծածկագրով
գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

h/h	անվանում	տեխնիկական բնութագիր	
1	ներկայացուցչական, արարողակարգային ծառայություններ	**ս.թ. օգոստոսի 20-ից սեպտեմբերի 4-ը Մոնթե Մելքոնյանի անվան ուսումնամարզական վարժարանում անցկացված «Խաղաղության Մարտիկ» միջազգային բանակային մրցույթի մասնակիցներին տրված սննդի, ջրի, ֆուրշետի, տոնական ճաշի ապահովման, այդ թվում՝**	
		ս.թ. օգոստոսի 20-ից սեպտեմբերի 4-ը	
		թեյ	գրիֆիլդ 2գ
		սուրճ	սուրճ փարիզյան n5
		կաթ կակաո	կաթ մարիաննա 1լ , կակաո nescafe 200գ
		շիլա բրնձով	հավի միս, բրինձ
		ձվածեղ	ձու, կարագ, ձեթ
		տաք բրուսկետաներ	հաց, խոզապուխտ, գունավոր պղպեղ
		կրուասան	ալյուր, ձու, շոկոլադե կրեմ
		միրգ	խնձոր, դեղձ, խմերուկ, եմիշ
		խաշած ձու	ձու արգնի
		խաշած հավի նրբերշիկ	հավի կրծքամիս, ալյուր, ձեթ
		կաթնաշոռ, թթվասեր	կաթնաշոռ ռոզմիլկ, թթվասեր ռոզմիլկ
		ապուր բանջարեղենային	դդմիկ, սմբուկ, կարտոֆիլ
		բրինձ բանջարեղենով	բրինձ, գազար, գունավոր պղպեղ
		մակարոն բանջարեղենով	մակարոն, ծաղկակաղամբ
		հավի մսով ուտեստ	հավի միս, կարտոֆիլ, ձեթ ,պանիր
		տավարի մսով ուտեստ	տավարի միս, ձեթ
		բանջարեղենով ու մսով ուտեստ	հավի միս,դդմիկ, սմբուկ, գազար,բոռկոլի
		լոլիկ, վարունգ	լոլիկ, վարունգ.
		աղցան օլիվյե	կարտոֆիլ, ֆիլե, գազար, գարոխ, թթվասեր
		աղցան բանջարեղենային	բազուկ, լոբի, թթու վարունգ, կարտոֆիլ
		աղցան հազարով	հազար, կարմիր բողկ,
		ապուր հավի մսով	հավի միս, բրինձ, կարտոֆիլ, կանաչի
		սիսեռ բանջարեղենով	սիսեռ , սմբուկ, ծաղկակաղամբ, գազար
		հաճարով փլավ	հաճար, շամպինյոն
		տավարի մսով ուտեստ	խաշլամա, տավարի միս, կարտոֆիլ, սոխ
		հավի մսով ուտեստ	հավի տապակա, կարտոֆիլ
		աղցան գազարով	կորեական գազար, սև պղպեղ
		աղցան բազուկով	բազուկ,ընկույզ, թթվասեր
		ջուր, ջերմուկ	բնական աղբյուրի ջուր բյուրեղ 0.5լ պլաստիկ տարա
		կոլա, ֆանտա, սփրայթ	գազավորված ջուր կոլա 0.5լ պլաստիկ տարա
		կոմպոտ	խնձոր, շաքարավազ, ջուր
		մածուն	մածուն ռոզմիլկ
		կանաչի	համեմ, ռեհան սոխ, կոտեմ
		պանրի տեսակների	սուլուգունի, լոռի, ռոքֆոր
		սպիտակ հաց, սև հաց, լավաշ	սպիտակ հաց, սև հաց, լավաշ
2	ներկայացուցչական, արարողակարգային ծառայություններ	**ս.թ. սեպտեմբերի 2-ին**	
		սառը խորտիկներ	
		պանրի տեսակների	սուլուգունի, լոռի
		ձիթապտուղ + լիմոն	ձիթապտուղ copoliva, լիմոն
		կանաչի + ծիծակ	համեն, ռեհան,սոխ,թարխուն
		պոմիդոր, վարունգ	պոմիդոր վարունգով աղցան
		մսային ասորտի	երշիկ աթենք, պրոշուտու, ապղտած խոզի ֆիլե,բաստուրմա աթենք
		աղցաններ	
		կապրեզե	լոլիկ,պանիր,սոուս
		քամած մածուն, վարունգով	քամած մածուն 100գ վարուգ կտրատվածՁ0գ
		սմբուկով ու կաթնաշոռով ռուլետներ	կաթնաշոռ 20գ փաթաթված սմբուկիշերտերով
		տաք ուտեստներ	
		խոզի խորոված	խոզի միս,ձեթ
		գառան խորոված	գառի միս, ձեթ
		հավի խորոված	հավի միս, ձեթ
		բանջարեղենի խորոված	կարտոֆիլ, ծաղկակաղամբ, սմբուկ,գազար
		կարտոֆիլի խորոված	կարտոֆիլի խորոված շերտերով
		խորոված ստեռլյադ թարխունի կրեմ ֆրեշով	ստեռլյադի խորոված համեմունքներ, թարխուն, մայոնեզ, շամպինիոն

		ըմպելիքներ	
		Օղի Օբսոլյուտ 0,5	օղի օբսոլյուտ, ապակե տարա 0,5
		Իջևան կարմիր	գինի Իջևան կարմիր ապակե տարա 0.7լ
		Իջևան սպիտակ	գինի Իջևան սպիտակ ապակե տարա 0.7լ
		ըմպելիքներ	
		ջուր, հանքային ջուր	բնական աղբյուրի ջուր բյուրեղ 0.5լ պլաստիկ տարա
		կոլա, ֆանտա	գազավորված ջուր կոլա 0.5լ պլաստիկ տարա
		կոմպոտ	լիմոն, շաքարավազ, ջուր
		հաց, լավաշ	հաց, լավաշ
3	ներկայացուցչական, արարողակարգային ծառայություններ	**ս.թ. օգոստոսի 28-ին, ս.թ. սեպտեմբերի 1-ին**	
		աղցան	
		հավով օլիվյե	հավի միս, գազար, կանաչ ոլոռ, կարտոֆիլ, թթու վարունգ, մաղադանոս, մայոնեզ, թթվասեր
		պոմիդոր, վարունգ	լոլիկ, վարունգ, ձեթ
		պանրի տեսականի	պանիր լոռի, սուլուգունի
		տաք ուտեստներ	
		հավի կտրատած մսով կոտլետ	հավի միս, գազար, սոխ, սունկ, ձեթ
		տավարի մսով բանջարեղեն	տավարի միս, սմբուկ, լոլիկ, պղպեղ, համեմունքներ, կանաչի
		ջեռոցի կարտոֆիլ քունջութով	կարտոֆիլ, քունջութ, ձեթ
		ըմպելիք	
		ջուր, հանքային ջուր ,կամ կոմպոտ	ջուր, պլաստիկ տարա, հանքային ջուր,պլաստիկ տարա, մրգային օշարակ, ջուր
		կոլա, ֆանտա, սփրայթ	գազավորված ըմպելիքներ կոլա, ֆանտա, սփրայթ, պլաստիկ տարա
		աղցան	
		աղցան հայկական	լոլիկ, վարունգ, պղպեղ, պանիր
		պոմիդոր, վարունգ	լոլիկ, վարունգ, ձեթ
		պանրի տեսականի	պանիր սուլուգունի, լոռի
		տաք ուտեստներ	
		հավի շիշ թառաք հումմուսով	հավի միս, հումմուս սիսեռով
		գառան խաշլամա	գառի միս , բանջարեղեն
		բրինձ ամառային	բրինձ, լոլիկ, պղպեղ
		ըմպելիք	
		ջուր, հանքային ջուր ,կամ կոմպոտ	ջուր, պլաստիկ տարա, հանքային ջուր,պլաստիկ տարա, մրգային օշարակ, ջուր
		կոլա, ֆանտա, սփրայթ	գազավորված ըմպելիքներ կոլա, ֆանտա, սփրայթ, պլաստիկ տարա
4	ներկայացուցչական, արարողակարգային ծառայություններ	**ս.թ. օգոստոսի 20-ից սեպտեմբերի 4-ը**	
		ջուր	բնական աղբյուրի ջուր բյուրեղ 0.5լ պլաստիկ տարա
5	ներկայացուցչական, արարողակարգային ծառայություններ	**ս.թ. օգոստոսի 28-ին**	
		կանապեներ	
		ռոքֆորով, ընկույզով և խաղողով	հացիկ.ռոքֆոր պանիր, ընկույզ, խաղող
		ֆետայով և ձիթապտղով	ֆետա պանիր, ձիթապտուղ, հացիկ
		պիկանտ երշիկով	հացիկ,երշիկ
		սմբուկի ռուլետով	սմբուկի շերտերով ռուլետ
		խորտիկներ	
		ձիթապտղի պլատո	կանաչ և սև ձիթապտուղ
		պանրի պլատո	
		խմորեղեն	
		արևելյան	շերտավոր խմոր ընկույզ դարչին
		մրգային թարթեր	շաքարավազով այլուրով խմոր, սեզոնային մրգեր
		ֆերրերո պնդուկով	շաքարավազով խմոր,եփված շոկոլադե կրեմ, պնդուկ
		աղանդեր	
		տրայֆլ մրգերով և ընկույզով	
		ըմպելիք	
		բնական լիմոնադներ	մրգային օշարակ, գազավորված ջուր
		միրգ	
		մրգային կոմպոզիցիա	կեռաս, ելակ, ծիրան, տանձ, խնձոր
		ոգելից խմիչք	
		գինի Կարաս	գինի, ապակե տարա
		կոնյակ Ախթամար	կոնյակ, ապակե տարա
		կանապեներ	

		պաշինայով	պաշինա, հացիկ
		հոլ. պանրով	հոլ. պանիր, հացիկ
		քնջութապատ ֆետայով	ֆետա պանիր,քնջութ, հացիկ
		մոցառելայով ու պեստո սոուսով	պանիր մոցառելլա, պեստո սոուս, հացիկ
		խորտիկներ	
		ձիթապտղի պլատո	կանաչ և սև ձիթապտուղ
		պանրի պլատո	պանիր լոռի, հոլանդական, սուլուգունի, ռոքվոր
		խմորեղեն	
		էկլեր	շաքարավազով խմոր,եփված կրեմ
		տրյուֆել	շաքարավազով խմոր, եփված շոկոլադե կրեմ
		մրգային ռուլետ	բիսկիթային խմոր, սերուցքային կրեմ, մրգեր
		աղանդեր	
		մրգային մուս	սերուցք, թթվասեր, շաքարավազ, միրգ
		ըմպելիք	
		բնական լիմոնադներ	մրգային օշարակ, գազավորված ջուր
		միրգ	
		միրգ կոմպոզիցիա	կեռաս, ելակ, ծիրան, տանձ, խնձոր
		ոգելից ըմպելիք	
		գինի Կարաս	գինի, ապակե տարա
		կոնյակ Ախթամար	կոնյակ, ապակե տարա
6	ներկայացուցչական, արարողակարգային ծառայություններ	**ս.թ. սեպտեմբերի 2-ին**	
		կանապեներ	
		ռոքֆորով, ընկույզով և խաղողով	հացիկ.ռոքֆոր պանիր, ընկույզ, խաղող
		ֆետայով և ձիթապտղով	ֆետա պանիր, ձիթապտուղ, հացիկ
		պիկանտ երշիկով	հացիկ,երշիկ
		սմբուկի ռուլետով	սմբուկի շերտերով ռուլետ
		խորտիկներ	
		ձիթապտղի պլատո	կանաչ և սև ձիթապտուղ
		պանրի պլատո	
		խմորեղեն	
		արևելյան	շերտավոր խմոր ընկույզ դարչին
		մրգային թարթեր	շաքարավազով ալյուրով խմոր, սեզոնային մրգեր
		ֆերրերո պնդուկով	շաքարավազով խմոր,եփված շոկոլադե կրեմ, պնդուկ
		աղանդեր	
		տրայֆլ մրգերով և ընկույզով	
		ըմպելիք	
		բնական լիմոնադներ	մրգային օշարակ, գազավորված ջուր
		միրգ	
		մրգային կոմպոզիցիա	կեռաս, ելակ, ծիրան, տանձ, խնձոր
		ոգելից խմիչք	
		գինի Կարաս	գինի, ապակե տարա
		կոնյակ Ախթամար	կոնյակ, ապակե տարա
		կանապեներ	
		պաշինայով	պաշինա, հացիկ
		հոլ. պանրով	հոլ. պանիր, հացիկ
		քնջութապատ ֆետայով	ֆետա պանիր,քնջութ, հացիկ
		մոցառելայով ու պեստո սոուսով	պանիր մոցառելլա, պեստո սոուս, հացիկ
		խորտիկներ	
		ձիթապտղի պլատո	կանաչ և սև ձիթապտուղ
		պանրի պլատո	պանիր լոռի, հոլանդական, սուլուգունի, ռոքվոր
		խմորեղեն	
		էկլեր	շաքարավազով խմոր,եփված կրեմ
		տրյուֆել	շաքարավազով խմոր, եփված շոկոլադե կրեմ
		մրգային ռուլետ	բիսկիթային խմոր, սերուցքային կրեմ, մրգեր
		աղանդեր	
		մրգային մուս	սերուցք, թթվասեր, շաքարավազ, միրգ
		ըմպելիք	
		բնական լիմոնադներ	մրգային օշարակ, գազավորված ջուր
		միրգ	
		միրգ կոմպոզիցիա	կեռաս, ելակ, ծիրան, տանձ, խնձոր
		ոգելից ըմպելիք	
		գինի Կարաս	գինի, ապակե տարա
		կոնյակ Ախթամար	կոնյակ, ապակե տարա
7	ներկայացուցչական,	**ՀՀ պաշտպանության նախարարությունում ՀՀ վարչապետի 2020թ. հուլիսի 4-ին (20 անձ)**	

	արարողակարգային ծառայություններ	**ընդունելության համար նախատեսված սուրճի ընդմիջման**	
		էկլեր	այլուր, ձու, կրեմ
		ռաֆայելո	այլուր, ձու, կրեմ, կոկոսի միջուկ
		սեզոնային մրգեր, հատապտուղ	ծիրան, կեռաս, ելակ, մոշ, խնձոր
		ջուր, հանքային ջուր	ջուր բյուրեղ 0,5լ., ջերմուկ 0,5լ.
		կոնֆետներ	չրերով կոնֆետների տեսականի
		բնական հյութեր	բնական հյութ
		սուրճ	լուծվող սուրճ
8	ներկայացուցչական, արարողակարգային ծառայություններ	**ս.թ. հուլիսի 27-ին 2020/2021 ուսումնական տարում ՀՀ ՊՆ և օտարերկրյա ՌՈՒՀ-երի ընդունելության քննությունների և մանդատային հանձնաժողովի 1-ին նիստի վարչական համալիրի կոլեգիայի նիստերի դահլիճում (25 անձ) համար ՀՀ ՊՆ կադրային և ռազմակրթական քաղաքականության վարչության կողմից կազմակերպված միջոցառման**	
		ֆրանսիական էկլեր	այլուր, ձու, կրեմ
		միկադո	շերտավոր խմոր, կրեմ, շոկոլադ
		շոկո ելակով	ելակ, բիսկվիտային խմոր, ջնարակ
		սեզոնային մրգեր, հատապտուղ	սեխ, ծիրան, կեռաս, ելակ, մորի, խնձոր
		կոնֆետի տեսականի	չրով կոնֆետների տեսականի
		չրերի տեսականի	սալորի, խնձորի, ծիրանի չրեր
		սուրճի տեսականի	կարտե նոիր, յակոբս, փարիզյան
		թեյ	Ռիչարդ
		բնական հյութեր	բնական մրգերից քամված հյութ
		ջուր, հանքային ջուր	աղբյուրի ջուր Բյուրեղ 0,5լ., Ջերմուկ գազավրված 0,33լ.
		կոնյակ	Նաիրի 0,5լ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ս. ՅՈԼՉՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Ռեդի-Սթեդի» ՍՊԸ Տնօրեն

Գ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

«ՌԵԴԻ-ՍԹԵԴԻ»
«READY-STEADY»
«РЕДИ-СТЕДИ»
00851011

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

հ/հ	անվանում	չ/մ	քանակը	միավորի գինը (ՀՀ դրամ)	ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)	ծառայությունների մատուցումը 2020թ. ըստ ամիսների, ընդ որում՝							
						հուլիսի 4-ին	հուլիսի 27-ին	օգոստոսի 20-ից սեպտեմբերի 4-ը	սեպտեմբերի 2-ին	օգոստոսի 28-ին, սեպտեմբերի 1-ին	օգոստոսի 20-ից սեպտեմբերի 4-ը	օգոստոսի 28-ին	սեպտեմբերի 2-ին
1	ներկայացուցչական արարողակարգային ծառայություններ	դրամ	1	10,055,867.80	10,055,867.80								
		անձ	5,225	1,924.568				5,225					
2	ներկայացուցչական արարողակարգային ծառայություններ	դրամ	1	1,368,900	1,368,900								
		անձ	135	10,140					135				
3	ներկայացուցչական արարողակարգային ծառայություններ	դրամ	1	287,000	287,000								
		անձ	140	2,050						140			
4	ներկայացուցչական արարողակարգային ծառայություններ	դրամ	1	390,000	390,000								
		անձ	3,000	130							3,000		
5	ներկայացուցչական արարողակարգային ծառայություններ	դրամ	1	193,800	193,800								
		անձ	20	9,690								20	
6	ներկայացուցչական արարողակարգային ծառայություններ	դրամ	1	189,800	189,800								
		անձ	20	9,490									20
7	ներկայացուցչական արարողակարգային ծառայություններ	դրամ	1	169,300	169,300								
		անձ	20	8,465		20							
8	ներկայացուցչական արարողակարգային ծառայություններ	դրամ	1	62,550	62,550								
		անձ	25	2,502			25						

Ծանոթություն.

- Հ/հ՝ 1-ից 6-րդ տողեր՝ մատուցվող ծառայությունների վայրը՝ ք.Դիլիջան, Մ.Մելքոնյանի անվան վարժարան և ք.Երևան, Բագրևանդի 5 հասցեում:
- Հ/հ՝ 7 և 8-րդ տողեր՝ մատուցվող ծառայությունների վայրը՝ ք.Երևան, Բագրևանդի 5 հասցեում:
- Պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագիրն ուժի մեջ մտնելը /ս.թ. հուլիսից/ կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՖՍ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Ռեդի-Սթեդի» ՍՊԸ Տնօրեն

Գ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված 2
N ՄԱԾՁԲ-20-7-5 ծածկագրով
գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/h	Անվանում	CPV կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ., ըստ եռամսյակների (աճողական), բայց ոչ ուշ քան 10.12.2020թ., ընդ որում՝
			IV եռամսյակ
1	ներկայացուցչական արարողակարգային ծառայություններ	98391160/1	10,055,867.80
2	ներկայացուցչական արարողակարգային ծառայություններ	98391160/1	1,368,900
3	ներկայացուցչական արարողակարգային ծառայություններ	98391160/1	287,000
4	ներկայացուցչական արարողակարգային ծառայություններ	98391160/1	390,000
5	ներկայացուցչական արարողակարգային ծառայություններ	98391160/1	193,800
6	ներկայացուցչական արարողակարգային ծառայություններ	98391160/1	189,800
7	ներկայացուցչական արարողակարգային ծառայություններ	98391160/1	169,300
8	ներկայացուցչական արարողակարգային ծառայություններ	98391160/1	62,550

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Ռեդի-Սթեդի» ՍՊԸ Տնօրեն

Գ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված 3
ՄԱԾՁԲ-20-7-5 ծածկագրով
պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
ՄԱԾՁԲ-20-7-5 ծածկագրով
պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց **Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____ _____
ազգանուն, անուն ազգանուն, անուն

_____ _____
ստորագրություն ստորագրություն